

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԿԱՄՈՑԻ

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր**

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հարությունյան Բ. Հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Սվազյան Հ. Ս.
պատմական գիտությունների թեկնածու
Հակոբյան Ա. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտ – Մատենադարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 4-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Անկախ պետականության երկարատև բացակայության պայմաններում մեր երկրի և ժողովրդի տարբեր հատվածներ հայտնվել են հարևան պետությունների սահմաններում և ստիպված են եղել ապրել այդ պետությունների օրենքներով: Հայ ժողովրդի քաղաքական կյանքի վայրիվերումները հատկապես ծանր հետևանքներ են ունեցել Հայաստանի ծայրամասային նահանգների համար, որոնք հնուց ի վեր հարևան պետությունների նվաճողական ձգտումների նպատակակետն են հանդիսացել և շարունակում են այդպիսին մնալ մինչև այժմ: Նման երկրամասերի թվին է պատկանում նաև Հայոց Արևելից կողմերը, որը հայտնի էր նաև *Առան, Աղվանք, Աղվանք Հայոց, Աղվանից կողմանք, Արևելք, Արևելից կողմանք, Հյուսիս Արևելից կողմանք, Խորին աշխարհ Հայոց, Խորին Հայք* անվանումներով: Այն միավորում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք գավառները, որոնք Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո հանվել էին մարզպանության վերածված Հայաստանի կազմից և միացվել հարևան Աղվանից մարզպանությանը: Փաստորեն, Հայոց Արևելից կողմերի օրինակով կարելի է ներկայացնել ինչպես Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը, որի մասն էին կազմում Արցախը և Ուտիքը, այնպես էլ ուրվագծել թագավորության վերացումից հետո տեղի ունեցած վարչական փոփոխությունների ընթացքը և դրանց հետևանքով ստեղծված նոր իրավիճակը, քանի որ «Հայոց Արևելից կողմեր» հասկացությունը հենց այդ նոր իրավիճակի ծնունդն էր: Այս հանգամանքի շնորհիվ մեծ կարևորություն է ստանում այդ երկրամասի պատմա-աշխարհագրական հետազոտությունը:

Մեր օրերում Հայոց Արևելից կողմերի նկատմամբ գիտական հետաքրքրությունը կապված է նաև արտաքին քաղաքական իրավիճակի հետ: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի Հանրապետության հետ առկա հակասություններն առնչվում են գլխավորապես այս երկրամասին, ուստի վերջին տարիներին գիտական շրջանակներում շահարկման առարկա են դարձել նրա պատմության հետ կապված զանազան հարցեր: Այդ շահարկումներին վերջ տալու համար անհրաժեշտ է հնարավոր չափով լուծում տալ գիտնականների առջև դրված խնդիրներին, ինչպես նաև միասնական մոտեցում ձևավորել մի շարք առանցքային հարցերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Հայոց Արևելից կողմերի ուսումնասիրությանը նվիրված այս աշխատանքով մենք նպատակ ունենք առաջին հերթին ամբողջացնել Հայաստանի կարևորագույն հատվածներից մեկի պատմա-աշխարհագրական նկարագիրը և գտնել նրա պատմությանը վերաբերող առանցքային հարցերի պատասխանները: Սակայն գոյություն ունեն նաև ավելի հեռահար նպատակներ, այն է՝ ստեղծել մի մոդել կամ մեթոդ, որի շնորհիվ հնարավոր կլինի նույնատեսակ քննության ենթարկել նաև Հայաստանի մյուս շրջանները և այդ ամենի համադրմամբ ստանալ հին Հայաստանի պետական կարգի ընդհանուր պատկերը: Սա, իհարկե, չափազանց ծավալուն

աշխատանք է և մեծ ջանքեր ու երկար ժամանակ է պահանջում, ուստի Հայոց Արևելից կողմերին նվիրված մեր հետազոտությունը դիտարկում ենք՝ որպես այդ երկար ճանապարհի առաջին քայլերից մեկը:

Հայոց Արևելից կողմերի ուսումնասիրության ընթացքում մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք այն խնդիրների վրա, որոնք ընդհանուր են ամբողջ երկրի համար: Մեզ ավելի շատ հետաքրքրել են ոչ թե այս կամ այն տարածքին բնորոշ առանձնահատկությունները, այլ ամբողջ համակարգի կառուցվածքը, նրա կենսագործունեության հիմքը հանդիսացող երևույթները, զարգացման ընթացքը և օրինաչափությունները:

Ելնելով վերոշարադրյալից՝ սույն աշխատանքը ստեղծելիս մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ցույց տալ Հայոց Արևելից աշխարհների՝ Արցախի և Ուտիքի, ինչպես նաև նրանց մասը կազմող գավառների տեղը Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգում, ներկայացնել այդ աշխարհների կազմավորման ընթացքը,

2. Ներկայացնել Մեծ Հայքի թագավորության բաժանումից հետո Արևելյան կամ Պարսկական Հայաստանում տեղի ունեցած վարչական փոփոխությունները և ստեղծված նոր վարչա-քաղաքական իրադրությունը,

3. Ցույց տալ, թե ե՞րբ և ինչու՞ են Մեծ Հայքի երկու հյուսիսարևելյան աշխարհները միացվել Աղվանից մարզպանությանը, և թե ինչպե՞ս է դա ազդել նրանց կարգավիճակի վրա,

4. Ներկայացնել Աղվանից մարզպանությանը միացված հայկական տարածքներում՝ Հայոց Արևելից կողմերում տիրող, իրավիճակը և այդ երկրամասի դերը մարզպանության քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր կյանքում,

5. Ներկայացնել Արցախ և Ուտիք աշխարհների գավառաբաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի՝ հիմնական ուշադրությունը բևեռելով գավառների տեղադրության և սահմանների խնդիրներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:

Ատենախոսությունը շարադրված է թեմային վերաբերող սկզբնաղբյուրների համադրության ու համեմատական ուսումնասիրության, ինչպես նաև նրան առնչվող գիտական աշխատանքների քննական վերլուծության միջոցով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ատենախոսության բնույթը հստակ ժամանակագրական սահմաններ դնել չի պահանջում, ուստի յուրաքանչյուր խնդիր քննության է առնվել իր ժամանակի մեջ, մասնավորապես Արցախ և Ուտիք աշխարհների ձևավորումն ու զարգացումն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև IV դ. ընկած հատվածը, իսկ արդեն Հայոց Արևելից կողմերին և նշված երկու աշխարհների գավառաբաժանմանն առնչվող հարցերը՝ V-VII դդ.:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության մեջ քննության առնված խնդիրներն ամբողջությամբ առաջին անգամ են ուսումնասիրության առարկա դառնում մեկ

աշխատանքի շրջանակներում: Տարաբնույթ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համեմատական վերլուծության միջոցով ներկայացվել է Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի ձևավորման և զարգացման ընթացքը, ցույց է տրվել, որ դա միասնական համակարգ էր՝ ստեղծված արքունիքի նպատակային քաղաքականության արդյունքում: Սկզբնաղբյուրների տեղեկությունների վերլուծության միջոցով բացահայտվել է, որ Մովսես Խորենացու կողմից Վաղարշակ թագավորի գործունեության նկարագրության մեջ ուղղակի վկայություն կա աշխարհների ստեղծման մասին: Ատենախոսության մեջ նաև համակողմանի քննության են ենթարկվել Մեծ Հայքի բաժանումից հետո Հայոց Արևելից կողմերի և նրա մաս կազմող Արցախի և Ուտիքի ունեցած կարգավիճակի հարցն ու Աղվանից մարզպանության կազմավորման ընթացքը, ցույց է տրվել, որ մարզպանը սկզբնապես եղել է զինվորական պաշտոնյա, որի գործառնություններն են եղել պետության արտաքին սահմանների պաշտպանությունը և նվաճված երկրները հնազանդության մեջ պահելը, իսկ քաղաքացիական իշխանություն նրան տրվել է ավելի ուշ: Աշխատանքում ներկայացված են Սասանյան Պարսկաստանի կողմից իրականացված վարչական փոփոխությունները, որոնց արդյունքում ձևավորվել էր «Աշխարհացոյց»-ում նկարագրվող իրավիճակը:

Ատենախոսությունում արված եզրակացությունները կարող են նպաստել Մեծ Հայքի թագավորության և Սասանյան Պարսկաստանի վարչա-քաղաքական բաժանման համակարգերի մասին ավելի հստակ և ճշգրիտ պատկերացում կազմելուն: Դրանք կարող են օգտագործվել նաև բուհական ու դպրոցական դասագրքերի և քարտեզների ստեղծման ժամանակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնում: Ուսումնասիրության հիմնական դրոյթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած երեք հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Մույն աշխատության աղբյուրագիտական հիմքը, ինչպես հին ու միջին դարերի ցանկացած այլ ուսումնասիրության դեպքում, բավական սահմանափակ է, ուստի կարևոր է եղած սկզբնաղբյուրների լիարժեք օգտագործումը: Մեր աշխատանքի հիմնական սկզբնաղբյուրը «Աշխարհացոյց»-ն է, որը մեզ է հասել երկու տարբերակով, որոնք ընդունված է անվանել ընդարձակ և համառոտ խմբագրություններ: Այն ունեցել է մի քանի հրատարակություններ Մովսես Խորենացու մյուս աշխատությունների հետ միասին, որոնցից մենք օգտագործել ենք 1843 թ. հրատարակությունը¹, ապա առանձին գրքերով հրատարակվել են նրա ռուսերեն թարգմանությունը² և

¹ Մրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 583-616:

² Патканов Керопэ, Армянская география VII в. по р. X. приписывавшаяся Моисею Хоренскому, Санкт-Петербург, 1877.

ընդարձակ խմբագրությունը¹: Հետագայում «Աշխարհացոյց»-ը նույնիսկ տեղ է գտել Անանիա Շիրակացու երկերի շարքում²: Ավելի ուշ Սուրեն Երեմյանը փորձել է վերականգնել «Աշխարհացոյց»-ի նախնական բնագիրը³, սակայն նրա ձեռքի տակ եղած ձեռագրերի վիճակը թույլ չի տվել հաջողությամբ ավարտին հասցնել գործը և ուսումնասիրողների սեղանին դնել «Աշխարհացոյց»-ի մի այնպիսի տեքստ, որի կարիքը զգացվում էր: Ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու համար մենք օգտվել ենք նաև «Աշխարհացոյց»-ի ձեռագիր օրինակներից, որոնք պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում⁴: Քանի որ «Աշխարհացոյց»-ի մինչ այժմ հրատարակված բոլոր օրինակներն էլ զգալի թերություններ ունեն, ապա միայն այս ձևով կարելի է օգտագործել այդ կարևորագույն սկզբնաղբյուրի բոլոր տեղեկությունները:

Ինչպես հայտնի է, պատմաբանների բազում սերունդների կողմից քննարկման առարկա է դարձել «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցը, որը մինչև օրս էլ միանշանակ պատասխան չի ստացել: Սա ինքնին բավական ծավալուն և բարդ խնդիր է, որը չի մտնում մեր աշխատանքի թեմայի մեջ, ուստի մենք այս հարցի մեջ չենք խորանա: Նշենք պարզապես, որ մեզ ավելի հավանական է թվում այն տեսակետը, որն «Աշխարհացոյց»-ի հեղինակ է համարում Մովսես Խորենացուն:

Մեր աշխատանքի համար կարևոր նշանակություն ունեն IV-V դդ. հայ պատմիչների՝ Ագաթանգեղոսի⁵, Փավստոս Բուզանդի⁶, Կորյունի⁷, Եղիշեի⁸, Ղազար Փարպեցու⁹ և Մովսես Խորենացու¹⁰ երկերը, որոնք զգալի չափով լրացնում են «Աշխարհացոյց»-ի տեղեկությունները և հնարավորություն են տալիս ճիշտ հասկանալ դրանք:

¹ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881:

² Աբրահամյան Աշոտ, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944:

³ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, Հավելված Ա, էջ 100-115 (Հայաստանին և հարևան երկրների վերաբերող հատվածը), տե՛ս նաև Երեմյան Ս., «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 209-230, 1973, թիվ 1, էջ 238-252, թիվ 2, էջ 261-274:

⁴ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր. թիվ 582, 696, 1267, 1459, 1486, 1717, 1770, 1864, 1883, 1898, 2019, 2191, 2291, 2370, 2748, 3160, 3391, 3502, 3941, 4284, 5120, 5613, 7993:

⁵ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիղիս, 1909 (այսուհետ՝ Ագաթանգեղոս):

⁶ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883 (այսուհետ՝ Փավստոս Բուզանդ):

⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981 (այսուհետ՝ Կորյուն):

⁸ Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957 (այսուհետ՝ Եղիշե):

⁹ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիղիս, 1904 (այսուհետ՝ Ղազար Փարպեցի):

¹⁰ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991 (այսուհետ՝ Մովսես Խորենացի):

Հայոց Արևելից կողմերի պատմության համար առանցքային նշանակություն ունի Մովսես Կաղանկատվացու երկը¹: Մրա վերաբերյալ ևս ուսումնասիրողները տարատեսակ կարծիքներ են հայտնել, նրա հեղինակին տարբեր ժամանաշրջաններ տեղափոխել և երկի տարբեր հատվածներ վերագրել տարբեր մարդկանց: Մենք նպատակ չունենք խորանալ այս խնդրի մեջ, որն, անշուշտ, աղբյուրագիտական լուրջ ուսումնասիրության նյութ է: Ամեն ինչ վկայում է այն մասին, որ «Աղվանից աշխարհի պատմությունը» ստեղծվել է X դ., երբ նոր էր ձևավորվում Հայաստանի տարբեր երկրամասերին նվիրված պատմական աշխատություններ գրելու սովորությունը, և հանդիսացել է այդ ուղղության առաջնեկներից մեկը, պարզապես նրա հեղինակը չի կարողացել ստեղծել մի ամբողջական մենագրություն, այլ ուղղակի ծաղկաքաղ է արել Հայոց Արևելից կողմերին վերաբերող տեղեկություններն իր ձեռքի տակ եղած աղբյուրներից՝ շատ հաճախ արտագրելով ամբողջական գլուխներ ավելի հին ժամանակների պատմիչներից: Ժամանակակից գիտության համար սա դրական երևույթ է, քանի որ Մովսես Կաղանկատվացին, օգտվելով ավելի վաղ շրջանի պատմիչների երկերից, օգտագործել է մեզ չհասած և, հավանական է, ավելի լավ պահպանված օրինակներ:

Օտարալեզու հեղինակներից պետք է առանձնացնել Ստրաբոնին², Պլինիոս Ավագին³ և Կլավդիոս Պտղոմեոսին⁴: Նրանց հաղորդած տեղեկություններն անգնահատելի արժեք ունեն հին Հայաստանի աշխարհագրական նկարագիրը բացահայտելու տեսանկյունից: Միայն դրանց շնորհիվ է, որ մենք կարողացել ենք պատկերացում կազմել հին շրջանում Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի մասին և հետևել այդ համակարգի կազմավորման ու զարգացման ընթացքին:

Հայոց Արևելից կողմերի ուսումնասիրությունը սկզբնապես կատարվել է Հայաստանի պատմության և աշխարհագրության շրջանակներում: Այս գործում առաջինը Ղուկաս Ինձիճյանն էր, որն իր «Ստորագրությունն հին Հայաստանեայց»⁵ մեծարժեք աշխատության մեջ Մեծ Հայքի բոլոր աշխարհների շարքում ներկայացրել է նաև Արցախը և Ուտիքը: Սկզբնաղբյուրների տեղեկությունների պակասը և գիտության զարգացման այն ժամանակվա մակարդակը թույլ չեն տվել Ղ. Ինձիճյանին բավական խորը հետազոտություններ կատարել այս

¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Ե., 1983 (այսուհետ՝ Մովսես Կաղանկատվացի):

² Օտար աղբյուրները հայերի մասին, թիվ 1, Հունական աղբյուրներ, Ստրաբոն, Ե., 1940 (այսուհետ՝ Ստրաբոն), Страбон, География в 17-и книгах, М., 1964 (այսուհետ՝ Страбон):

³ Գայոս Պլինիոս (Ավագ) Մեկունդոս, Բնական պատմություն, տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Ե., 1981, էջ 343-348 (այսուհետ՝ ՇՊՔ, հ. 1):

⁴ Կլավդիոս Պտղոմեոս, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, Ե., 2011, էջ 10-12 (այսուհետ՝ ՇՊՔ, հ. 2), Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, Греческие писатели, Санкт-Петербург, 1890, էջ 228-247:

⁵ Ինձիճեան Ղուկաս, Ստորագրությունն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:

բնագավառում, բայց, այնուամենայնիվ, նրա առաջ քաշած տեսակետների մեծ մասը հաստատվել է հետագա ուսումնասիրություններով, և նրա կատարած աշխատանքը ամուր հիմք է հանդիսացել իրենից հետո եկած գիտնականների համար:

Հաջորդ գիտնականը, որը զբաղվել է Արցախի և Ուտիքի հարցերով, Ղևոնդ Ալիշանն է: Նա այս երկու երկրամասերին առնչվող զանազան խնդիրների անդրադարձել է իր մի շարք աշխատություններում՝ «Տեղագիր Հայոց Մեծաց»¹, «Արցախ»², «Ուտիք»³, «Այրարատ»⁴, «Միսական»⁵: Պետք է նշել, սակայն, որ Հայոց Արևելից կողմերին նվիրված նրա աշխատությունները չեն կարող համեմատվել Այրարատին կամ Սյունիքին նվիրված երկերի հետ: «Արցախ» և «Ուտիք» աշխատությունները Ղևոնդ Ալիշանի կողմից այդպես էլ ավարտին չեն հասցվել և հրատարակվել են այն վիճակով, որով գտնվել են, ուստի այդ երկերում տեղ գտած փաստերը պատշաճ ձևով դասակարգված չեն, Արցախի և Ուտիքի տարածքը ներկայացված է 19-րդ դ. եղած վիճակով, ուստի այս աշխատություններն ավելի շատ տեղագրական բնույթ ունեն, քան պատմա-աշխարհագրական:

Հայոց Արևելից կողմերին վերաբերող բազմակողմանի ուսումնասիրություններ է կատարել եպիսկոպոս Մակար Բարխուդարյանցն իր մի շարք աշխատություններում⁶, սակայն նա այս հարցը դիտարկել է Աղվանքի պատմության շրջանակներում և միշտ չէ, որ կարողացել է առանձնացնել բուն Աղվանքին և Հայոց Արևելից կողմերին վերաբերող տեղեկությունները: Այնուամենայնիվ, Մ. Բարխուդարյանցը մեծ քանակությամբ արժեքավոր փաստական նյութ է հավաքել ինչպես Աղվանքի, այնպես էլ Հայոց Արևելից կողմերի պատմության և աշխարհագրության վերաբերյալ, ուստի նրա երկերը մինչ օրս էլ չեն կորցրել իրենց կարևորությունն ու արդիականությունը:

Հայոց Արևելից կողմերի ուսումնասիրության գործում նշանակալի ավանդ է ներդրել Հ. Հյուբշմանն իր «Հին Հայոց տեղոյ անունները» աշխատությամբ⁷: Այն մինչև հիմա էլ պահպանում է իր բացառիկ դերը պատմական Հայաստանի տեղանուններին նվիրված ուսումնասիրությունների շարքում:

Հին Հայաստանի վարչա-քաղաքական բաժանումների մասին խոսելիս չի կարելի չհիշել Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»

¹ Ալիշան Ղևոնդ, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855:

² Ալիշան Ղ., Տեղագրութիւնք Հայաստանի – Արցախ, «Բազմավեպ» հայագիտական հանդես, 1988, թ. 1-4, էջ 228-273, 1989, թ. 1-4, էջ 186-220:

³ Նույնի՝ Տեղագրութիւնք Հայաստանի – Ուտի, «Բազմավեպ» հայագիտական հանդես, 1990, թ. 1-2, էջ 73-100, թ. 3-4, էջ 346-365, 1991, թ. 1-2, էջ 159-174, թ. 3-4, էջ 403-417, 1992, թ. 1-4, էջ 163-201:

⁴ Նույնի՝ Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890:

⁵ Նույնի՝ Միսական, Տեղագրութիւն Միսեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

⁶ Բարխուդարեանց Մակար, Ադուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, Պատմութիւն Ադուանից, Ա հատոր, Վաղարշապատ, 1902:

⁷ Հիւբշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907:

մենագրությունը¹, որտեղ առաջ քաշված բազմաթիվ գաղափարներ մինչ օրս էլ ուղղորդում են Հայաստանի հին և միջնադարյան պատմությամբ զբաղվողներին: Մեր աշխատանքին առնչվող մի շարք հարցեր քննության են առնվել նաև Ն. Ադոնցի այլ աշխատություններում²:

Հայաստանի պատմական աշխարհագրության բնագավառում կատարվող ուսումնասիրությունները համեմատաբար լայն թափ ստացան XX դ. երկրորդ կեսում: Այսպես, Ս. Երեմյանը, բազմաթիվ հովածների և քարտեզների հրատարակումից բացի, հանդես է եկել նաև «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատությամբ, որտեղ համակարգված և վերլուծված է այդ կարևորագույն սկզբնաղբյուրի հաղորդած ամբողջ փաստական նյութը, որով, ըստ էության, դրվել է «Աշխարհացոյց»-ի՝ որպես պատմական աշխարհագրության սկզբնաղբյուրի գիտական ուսումնասիրության սկիզբը: Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ ընդհանրացնող աշխատություն ստեղծելու փորձ է կատարել Թ. Հակոբյանը³, և այդ փորձն առայժմ միակն է մեր պատմագրության մեջ: Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանումների ուսումնասիրությանն է նվիրված Բ. Հարությունյանի «Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի» մենագրությունը⁴, որտեղ առաջին անգամ «Աշխարհացոյց»-ը դիտարկվում է՝ որպես վարչա-քաղաքական բաժանման համակարգ նկարագրող սկզբնաղբյուր: Հայոց Արևելից կողմերի պատմության ու պատմական աշխարհագրության ուսումնասիրությանն են նվիրված նաև Բ. Հարությունյանի մի շարք հոդվածները⁵:

¹ Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Е., 1971:

² Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, Հայաստանի պատմություն, Ակունքները X-VI դդ. մ. թ. ա., Հայերի ծագումը, Հոդվածներ, Ե., 1972, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Էջմիածին, 2005:

³ Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (Ուրվագծեր), Ե., 2005 (մենք օգտագործել ենք սույն աշխատության վերջին՝ յոթերորդ հրատարակությունը, իսկ առաջին անգամ այն հրատարակվել է 1965 թ.):

⁴ Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), (երկրորդ մասը, որը նվիրված է արևելյան և հյուսիսային աշխարհներին, հրատարակված չէ):

⁵ Նույնի՝ Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., ԲԵՀ, 1976, թիվ 2, էջ 77-95, Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, 1981, թիվ 12, էջ 61-76, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, Кавказ и Византия, вып. 1, Е., 1979, էջ 19-35, Լիփնքի տեղադրության հարցի շուրջը, ԲԵՀ, 1981, թիվ 1, էջ 108-124, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 256-266, ՊԲՀ, 1995, թիվ 1, էջ 191-208, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմաաշխարհագրական դիտարկումներ), ՊԲՀ, 2003, թիվ 1, էջ 119-145, Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան» Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 20-43, Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, «ՎԷՄ», 2010, թիվ 4 (32), էջ 24-57, Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր,

XX դ. երկրորդ կեսից սկսած ի հայտ են գալիս նաև Հայոց Արևելից կողմերի պատմությանը, պատմական աշխարհագրությանը և դրա հետ կապված գանազան խնդիրների նվիրված աշխատություններ: Սա պայմանավորված էր ոչ միայն պատմագիտության ընդհանուր զարգացմամբ, այլև քաղաքական խնդիրներով, մասնավորապես Արցախի հարցով, որը թեև չէր բարձրաձայնվում, բայց արդեն իր ազդեցությունն էր ունենում պատմագիտության վրա: Այս տեսանկյունից հատկապես բեղմնավոր է եղել Բ. Ուլուբաբյանի գիտական գործունեությունը: Նրա բազմաթիվ աշխատություններից կառանձնացնենք միայն «Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության»¹ երկը, որը հանդիսանում է այս թեմայով գրված թերևս միակ ընդհանրացնող աշխատանքը:

Վերջին տասնամյակներում ստեղծվել են և դեռ շարունակվում են ստեղծվել նոր ուսումնասիրություններ Հայոց Արևելից կողմերի և նրա հետ առնչվող այլ հարցերի վերաբերյալ, որոնցից են Ս. Սարգսյանի² և Ա. Ղարազյոզյանի³ աշխատությունները:

Արտասահմանյան հայագետներից պետք է առանձնացնել Ռ. Հյուսընի աշխատանքները⁴, որոնք կարևոր նշանակություն են ունեցել հայագիտության նվաճումները միջազգային գիտական հանրությանը ներկայացնելու գործում:

Հայոց Արևելից կողմերի պատմության հետ կապված որոշ խնդիրներ ուսումնասիրվել են Աղվանքի պատմությանը նվիրված աշխատություններում, որոնցից պետք է առանձնացնել Կ. Տրեվերի մենագրությունը⁵, որտեղ առաջին անգամ ի մի են բերվել Աղվանքի մասին գրեթե բոլոր տեղեկությունները, և ժամանակակից գիտական հիմքի վրա է դրվել դրանց ուսումնասիրությունը: Այս երկում տեղ են գտել նաև որոշ թյուրիմացություններ, որոնք բացասաբար են ազդել հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունների վրա: Այդ թյուրիմացություններից ամենանշանակալին այն է, որ Հայոց Արևելից կողմերին վերաբերող տեղեկությունները վերագրվել են բուն Աղվանքին, ինչը լուրջ շփոթություններ է առաջացրել:

Աղվանքի պատմության ուսումնասիրության և նրա հետ կապված բազմաթիվ վիճելի հարցերի լուսաբանման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Ա. Հակոբյանը⁶: Նա նաև մի շարք հոդվածներ է նվիրել Հայոց Արևելից

մաս առաջին, «Վեմ», 2011, թիվ 2 (34), էջ 31-64, մաս երկրորդ, «Վեմ», 2011, թիվ 3 (35), էջ 34-73:

¹ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Ե., 1981:

² Սարգսյան Ս., Արցախ, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Ե., 1996:

³ Ղարազյոզյան Ա., Գարդման, Պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2009:

⁴ Hewsens R. H., Introduction to Armenian historical geography, Revue des Etudes Armeniennes, Nouvelle serie, tome XIII, 1978-1979, 77-97, The Geographhy of Ananias of Širak (Ašxarhac'oyc'), The Long and the Short Recensions, Introduction, Translation and Commentary by Robert H. Hewsens, Dr. Ludwig Reichart Verlag, Wiesbaden, 1992:

⁵ Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в. до н. э. – VII в. н.э., М. – Л., 1959:

⁶ Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987:

կողմերի և հատկապես Արցախի պատմական աշխարհագրության հետ կապված խնդիրների ուսումնասիրությանը¹:

Աղվանքի պատմությանը (ներառյալ նաև Հայոց Արևելից կողմերի պատմության V-VIII դդ. ընկած ժամանակահատվածը) նվիրված ամենաարժեքավոր աշխատություններից մեկը Հ. Սվազյանի «Աղվանից աշխարհի պատմությունն» է²: Այստեղ ամփոփված են նրա կողմից տասնամյակների ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, և օգտագործված են ժամանակակից գիտության նվաճումները: Ավելի ուշ այն թարգմանվել է նաև ռուսերեն³: Հ. Սվազյանի որոշ ուսումնասիրություններ հրատարակվել են նաև առանձին հոդվածներով⁴:

Աղվանքի պատմությանը նվիրված մեծ քանակությամբ աշխատություններ են հրատարակվել նաև Ադրբեջանում: Դրանց թվին են պատկանում Զ. Բունիաթովի, Ի. Ալիևի, Ք. Ալիևի, Ֆ. Մամեդովայի և այլոց աշխատանքները⁵, որտեղ բոլոր հնարավոր և անհնար միջոցներով փորձ է արվում արհեստականորեն հարստացնել Ադրբեջանի պատմությունը՝ նախ յուրացնելով

¹ Յակոբեան Ա., Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, Հանդես ամսօրեայ, ՃԺԲ տարի, թիւ 1-12, Վիեննա, 1998, սիւն 269-324, Գոչալանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, Հանդես ամսօրեայ, ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, թիւ 1-12, սիւն 247-300, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունէաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղունքում, Հանդես ամսօրեայ, 2003, թիւ 1-12, էջ 45-142, Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան» Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 44-52, Միսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի, Հանդես ամսօրեայ, ՃԻԲ տարի, թիւ 1-12, Վիեննա, 2008, սիւն 91-146, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երևան, 2009:

² Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Ե., 2006:

³ Լույնի՝ История страны Алуанк (с древнейших времен по VIII в.), Е., 2009:

⁴ Լույնի՝ «Աղվանից աշխարհ» հասկացությունը՝ ըստ Մովսէս Կաղանկատվացու, ԲՀԱ, 1973, թիվ 1, էջ 225-234, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, թիվ 4, էջ 210-218, Խորենացիական ավանդագրույցի Միսակ-Առաւայան ճյուղը և նրա պատմական ատաղձը, «Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան» Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 5-19, «Աղվանք» տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ, ԼՀԳ, 2008, թիվ 2, Աղվանից Վաչե Բ և Վաչագան Գ Բարեպաշտ արքաների դինաստիական պատկանելության հարցի շուրջ, ԼՀԳ, 2009, թիվ 3, էջ 32-44, Арцах в исторических первоисточниках, Բանբեր Երևանի համալսարանի, 1989, թիվ 2, էջ 3-14:

⁵ Буниатов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, Алиев И., О первых племенных союзах на территории Азербайджана, Баку, 1959, К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV главы XI книги “Географии” Страбона, «Вестник древней истории», 1975, № 3, էջ 150-165, Алиев К., Кавказская Албания (I в. до н. э. – I в. н. э.), Баку, 1974, Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. – VIII в. н. э.), Баку, 1986:

Աղվանքի պատմությունը, ապա վերջինիս վերագրելով Մեծ Հայքի տարածքի զգալի մասը, այդ թվում՝ Հայոց Արևելից կողմերը՝ նպատակ ունենալով յուրացնել ինչպես հայկական հողերը, այնպես էլ հայ ժողովրդի մշակութային և գրական ժառանգությունը: Թեպետ նրանց բոլոր կեղծիքները վաղուց արդեն բացահայտված են, բայց մենք ևս ստիպված ենք եղել մեր աշխատանքի էջերում անդրադառնալ այդ տեսակետներին և հերթական անգամ ցույց տալ դրանց հակազիտական բնույթը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 159 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված են թեմայի կարևորությունը և արդիականությունը, մատնանշված են հեղինակի առջև դրված նպատակներն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրված է նաև թեմային վերաբերող աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլխում՝ «ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ՈՒՏԻՔ ԵՎ ԱՐՑԱՆ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ», ներկայացված է Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների ձևավորման ու զարգացման ընթացքը՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի պատմության համատեքստում:

Ի մի բերելով Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի ձևավորման ու նրա առանձին տարրերի մասին սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները և ուսումնասիրողների կողմից առաջ քաշված բոլոր տեսակետները՝ արձանագրվել է, որ այդ գործընթացն անցել է մի քանի փուլով: Առաջին փուլն ընդգրկում է պետության կազմավորումից մինչև մ. թ. ա. II կամ I դարերն ընկած ժամանակահատվածը, որի մասին սկզբնաղբյուրները գրեթե ոչինչ չեն հաղորդում, պարզապես կողմնակի փաստերի հիման վրա գալիս ենք այն եզրակացության, որ այդ ժամանակ պետությունը բաժանված էր բնաշխարհագրական սկզբունքով ձևավորված մի շարք երկրամասերից, որոնք իրենց վրա դեռ կրում էին տոհմա-ցեղային հարաբերությունների կնիքը, բայց դրանք իրենց տեղը գնալով զիջում էին՝ տեղի տալով հզորացող վարչական ապարատի ճնշմանը: Երկրորդ փուլը սկսվում է գավառների ստեղծումից և շարունակվում մինչև աշխարհների ի հայտ գալը՝ ընդգրկելով մ. թ. ա. II դ. - մ. թ. I դ. ընկած ժամանակահատվածը: Այս փուլում ստեղծվում են գավառներ կամ ստրատեգիաներ, որոնք արդեն կարելի է լիարժեք վարչական միավորներ համարել: Այս ժամանակաշրջանում մեծ առաջընթաց է տեղի ունենում պետական կառավարման համակարգի բոլոր բնագավառներում, որն ավարտվում է երկաստիճան վարչական բաժանման հաստատումով, այսինքն՝ գավառներից բացի ստեղծվում են նաև աշխարհներ: Երրորդ փուլը սկսվում է աշխարհների ստեղծումից (I դ. վերջ - II դ. սկիզբ) և հասնում մինչև Հայ Արշակունիների թագավորության բաժանումը և վերացումը (V դ.): Վերջին փուլն իրենից

ներկայացնում է վարչա-քաղաքական բաժանման համակարգի զարգացման ընթացքը մինչև թագավորության բաժանումն ու անկումը, որով նշված գործընթացն ընդհատվում է արհեստականորեն: Այս փուլը բնորոշվում է առաջին հերթին վարչական միավորների քանակական փոփոխություններով՝ գավառների թիվը դրանց մասնատման հետևանքով ավելանում է 120-ից հասնելով մոտ 190-ի, իսկ աշխարհներինը նվազում է՝ 20-ից իջնելով 15-ի: Եթե գավառների մասնատման պատճառը նախարարների ժառանգական տիրույթների թվի աճն էր, այսինքն՝ տեղի էր ունենում գավառի տարածքի բաժանում նախարարների միջև, ապա աշխարհների թվի փոփոխությունը պետք է համարել կենտրոնական իշխանության վարած քաղաքականության արդյունք: Երկու կամ երեք աշխարհ իրար միացնելով՝ արքունիքը փորձում էր թույլ չտալ, որ մեկ նախարարական տուն ամբողջությամբ իր վերահսկողության տակ վերցնեք այնպիսի խոշոր վարչական միավոր, ինչպիսին աշխարհն էր:

Արցախ և Ուտիք աշխարհները, իրենց գավառներով հանդերձ, ձևավորվել են նույն ժամանակներում և նույն ճանապարհով, ինչ որ Մեծ Հայքի մյուս վարչական միավորները, բայց այդ երկրամասերի վերաբերյալ տեղեկությունները հասնում են շատ ավելի վաղ ժամանակների: Արցախի առաջին հիշատակությանը մենք հանդիպում ենք Վանի թագավորության արքա Սարգուրի II-ի՝ Սևանա լճի ավազանում թողած Շովակի սեպագիր արձանագրությունում, որտեղ Սարգուրին խոսում է Արկուկե երկիրը գրավելու և Ուրտեխե երկրին հասնելու մասին՝ «Ուրտեխե» անվան ակնհայտ նմանությունը «Արցախին», ինչպես նաև նրա՝ Սևանի ավազանից դեպի հարավ-արևելք տեղորոշվելու հանգամանքը ուսումնասիրողների մոտ կասկած չի թողել, որ տվյալ դեպքում խոսքը նույն երկրանվան մասին է²: Արցախի մասին այս և մի քանի այլ սեպագիր արձանագրություններում պահպանված տեղեկությունների համեմատական վերլուծությունից Բ. Հարությունյանը եկել է այն եզրակացության, «որ Ուրտեխե երկրի անվանումը զուտ աշխարհագրական բնույթ ունի և մի ինչ-որ ցեղային երկիր չի ներկայացնում»³: Նրա կարծիքով՝ Ուրտեխե-Արցախ տեղանունը կապված է բնաշխարհագրական ինչ-ինչ հատկանիշի հետ և տրվել է այդ երկրամասին Սևանա լճի ավազանի կամ Ուեղուրի-Էթունիի բնակիչների

¹ ՀԺՊՔ, հ. 1, էջ 72:

² Капанцян Г., Chetto-armeniaca, E., 1931, էջ 104, Կարազոյան Հ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ԼՀԳ, 1978, թիվ 10, էջ 56, Связан Г., Арцах в исторических первоисточниках, ԲԵՀ, 1989, թիվ 2, էջ 3, Նույնի՝ Աղվանից աշխարհի պատմություն, էջ 74, Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, էջ 5-6, Նույնի՝ Արցախի պատմությունը, Ե., 1994, էջ 12-13, Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 257:

³ Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 259:

կողմից¹: Իր մեկ այլ հոդվածում Բ. Հարությունյանն այն տեսակետն է առաջ քաշում, որ Ուրտեխե նշանակում է «Քամոտ անտառ»²:

Տեղեկությունների սակավության պայմաններում Արցախի և Ուտիքի՝ Երվանդունիների ժամանակաշրջանի պատմության հետազոտությամբ զբաղվող գիտնականները հիմնական ուշադրությունը հատկացրել են Մեծ Հայքի արևելյան սահմանի հարցին, մանավանդ որ հենց դա է համեմատաբար շատ տարածայնությունների ու շահարկումների առիթ տվել: Սկզբնաղբյուրների բոլոր տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան սահմանագիծը երբևիցե չի վերանայվել և անփոփոխ կերպով պահպանվել է այդ պետության գոյության ամբողջ ընթացքում՝ իր մեջ ներառելով աշխարհագրիցյան Արցախ և Ուտիք աշխարհների ամբողջ տարածքը: Այդ տարածքի էթնիկ կազմի մասին հարցին սպառիչ պատասխան է տալիս Ստրաբոնը, նշելով, որ Մեծ Հայքի ու Տոփքի թագավորներ Արտաշեսի և Զարեհի իշխանության տակ գտնվող երկրում բոլորը խոսում են մի լեզվով³: Սրան հակասող ոչ մի տեղեկություն հին շրջանին վերաբերող աղբյուրներում պարզապես գոյություն չունի, ուստի կարելի է վստահորեն արձանագրել, որ Հայաստանի և՛ քաղաքական, և՛ էթնիկական սահմանը հյուսիս-արևելքում անցնում էր Կուր գետով, իսկ Հայոց Արևելից կողմերի՝ ոչ հայկական լինելու թեմայով բոլոր դատողությունները բացարձակապես զուրկ են որևիցե գիտական հիմքից:

Ստրաբոնը, նկարագրելով մ. թ. ա. I դ. Հայաստանը, հիշատակում է Օրքիստենե, Սակասենե և Արաքսենե (Արաքսի դաշտ)⁴ տեղանունները, որոնք տեղադրվում են Հայոց Արևելից կողմերում: Օրքիստենեն Արցախն է, Սակասենեն՝ Շակաշենը, իսկ Արաքսենեն՝ Ուտիքի հարավային մասը՝ այլ աղբյուրներից հայտնի Օտենեն, սակայն այստեղ մենք գործ ունենք ոչ թե վարչական միավորների, այլ բնաշխարհագրական շրջանների հետ:

Կլավդիոս Պտղոմեոսը Մեծ Հայքի աշխարհագրական նկարագրության մեջ թվարկում է նրա նահանգները, այդ թվում՝ Սոդուկենեն, Սակասենեն և Օտենեն⁵, որոնց տեղադրությունը Հայոց Արևելից կողմերում կասկած չի հարուցում: Սա պետք է համարել նաև Ուտիքի առաջին հիշատակությունը, քանի որ հնագույն Ուիտիա երկրի կամ ուդի ցեղի հետ կապի մասին տեսակետները բավարար չափով հիմնավորված չեն, իսկ *Ուտիք* անունն, ամենայն հավանականությամբ, ծագում է հայերեն «*հուլիտ*» բառից⁶:

Ինչպես հայտնի է, Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկը» քարտեզի նկարագրություն է, որտեղ բոլոր պետություններն ու տարածաշրջանները

¹ Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 259:

² Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, Վեմ համահայկական հանդես, Բ (Ը) տարի, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2010, էջ 39:

³ Ստրաբոն, XI, 14, 5, էջ 57:

⁴ Ստրաբոն, XI, 14, 4, էջ 55:

⁵ Կլավդիոս Պտղոմեոս, էջ 244:

⁶ Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 205:

ներկայացված են իրենց հստակ սահմաններով ու կոորդինատներով: Սա նշանակում է, որ Մեծ Հայքում թվարկված երկրամասերը զբաղեցնում էին թագավորության ամբողջ տարածքը և ունեին հստակ սահմանաբաժանում, ինչը հնարավոր է միայն վարչական միավորների դեպքում: Փաստորեն, հակառակ Ստրաբոնի հիշատակած շրջանների հետ ունեցած որոշ ընդհանրություններին՝ Պտղոմեոսի նկարագրած նահանգները սկզբունքորեն տարբեր միավորներ են և համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի աշխարհներին:

Հայոց Արևելից կողմերին վերաբերող Պտղոմեոսի տվյալները հիանալի կերպով լրացվում են Մովսես Խորենացու այն տեղեկություններով, որտեղ խոսվում է Վաղարշակ թագավորի կողմից Հայոց Արևելից կողմերում կուսակալ նշանակված Առանի և նրանից ծագող նախարարությունների՝ Ուտեացիների, Գարդմանացիների և Ծավդեացիների մասին: Պատմահոր հաղորդած տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ նա ներկայացնում է Մեծ Հայքի աշխարհների ստեղծումը, իսկ նշված երեք նախարարությունները կամ իշխանությունները համապատասխանում են վերոհիշյալ երեք միավորներին:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում» ներկայացված են Մեծ Հայքի՝ ըստ աշխարհների վարչական բաժանման համակարգը և դրա մաս կազմող Ուտիք (Օտենե), Գարդման (Սակասենե - Շակաշեն) և Արցախ (Մոդուկենե - Ծավդեք) աշխարհները, որոնց ձևավորման մասին տեղեկություններ են պահպանվել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցում»:

Ազաթանգեղոսի երկում Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցող նախարարների շարքում հիշատակվում են «*իշխանն Օււղէից աշխարհին*» և «*իշխանն Ուտիացոց աշխարհին*»²: Այն, որ այս ցուցակում բացակայում է Գարդմանացվոց իշխանի անունը, թույլ է տալիս ենթադրել, որ IV դ. սկզբում այդ աշխարհն արդեն միացված էր Ուտիքին: Ազաթանգեղոսի հիշյալ վկայությունը արժեքավոր է նաև նրանով, որ այստեղ վերջին անգամ ենք հանդիպում Ուտիացվոց և Ծավդեացվոց (Ծավդեից) իշխաններին, այսինքն՝ նկարագրվող իրադարձություններից կարճ ժամանակ անց այդ երկու իշխանությունները հեռացել են պատմության թատերաբեմից, որից հետո Ուտիքի տարածքի մեծ մասը միացվել է արքայական տիրույթներին, իսկ Արցախը տրվել է Սյունի նախարարական տան ներկայացուցիչներին, որոնք հայտնի էին «*Սյունյաց Երկրորդ*» անունով:

Աշխարհների ձևավորմանը և զարգացմանը զուգահեռ արքունիքի կողմից իրականացվել են տարածքային որոշ փոփոխություններ, որոնց նպատակն է եղել ավատատիրական հարաբերությունների և ժառանգական հողատիրության տարածման պայմաններում կենտրոնական իշխանության վերահսկողության տակ պահել ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհները և

¹ Մովսես Խորենացի, էջ 113:

² Ազաթանգեղոս, էջ 414-415:

լեռնանցքները: Այս քաղաքականության դրսևորումը պետք է համարել նաև նախապես Ուտիքի մաս կազմող Աղստև գետի ավազանի վերին հատվածի միացումը Այրարատին, քանի որ այդ տարածքով էին անցնում Արարատյան դաշտից դեպի Վիրք և Աղվանք գնացող ճանապարհները:

Երկրորդ գլուխը՝ «ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՆ» ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Առանի կամ Աղվանից մարզպանության վարչական ձևավորումը և Մեծ Հայքի Ուտիք և Արցախ աշխարհների միացումը մարզպանությանը», ներկայացված են մարզպանությունների ձևավորման ընթացքը և դրան ուղեկցող սահմանային փոփոխությունների խնդիրը: Սկզբնաղբյուրների տեղեկությունների համադրման և գիտական ուսումնասիրություններում արտահայտված տեսակետների քննությունը ցույց է տալիս, որ 387 թ. Մեծ Հայքի թագավորության բաժանումից և Այսրկովկասի նվաճումից հետո Սասանյան Պարսկաստանը ձեռնամուխ եղավ տարածաշրջանի թագավորությունները վերացնելու և նրանց տեղում նոր վարչա-քաղաքական միավորներ՝ մարզպանություններ ստեղծելու գործին: Նախկինում ուսումնասիրողներն այն կարծիքին էին, որ մարզպանությունները ստեղծվել են թագավորությունների վերացումից անմիջապես հետո, և միաժամանակ տեղի են ունեցել տարածքային փոփոխություններ, որոնց հետևանքով ձևավորվել են մարզպանությունների սահմանները¹, բայց սկզբնաղբյուրների համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված բոլոր փոփոխությունները տեղի են ունեցել ոչ թե միաժամանակ, այլ երկար տարիների ընթացքում, իսկ մարզպաններն էլ գոյություն են ունեցել թագավորների հետ միաժամանակ:

Մարզպանի պաշտոնի ներմուծումն ամենայն հավանականությամբ կապված է 387 թ. Մեծ Հայքի բաժանման և Այսրկովկասի նվաճման հետ: Նախապես մարզպանի պաշտոնը զինվորական բնույթ ուներ, քանի որ մարզպանները նվաճված երկրում տեղակայված պարսկական զորքի հրամանատարներն էին և պարտավոր էին պաշտպանել պետության արտաքին սահմանները՝ միաժամանակ հնազանդության մեջ պահելով մարզպանության բնակչությանը, բայց աստիճանաբար նրանք ձեռք են բերում նաև քաղաքացիական իշխանություն: Ժամանակի ընթացում պարսիկներն ընդլայնում էին մարզպանների լիազորությունները և հարմար առիթի դեպքում հերթով վերացնում թագավորական հարստությունները:

Առանի կամ Աղվանից մարզպանության՝ որպես Սասանյան Պարսկաստանի վարչա-քաղաքական միավորի ձևավորման գործընթացը տևել է մի քանի տասնամյակ՝ 387-461 թթ.: Դրա սկիզբը դրվել է Այսրկովկասի նվաճմամբ ու մարզպանների նշանակմամբ: Այդ գործընթացի ավարտը կապված է երկու նշանակալի իրադարձությունների հետ, որոնք են Աղվանքի թագավորության վերացումն ու հայկական Ուտիք և Արցախ աշխարհների միացումն Աղվանից

¹ Ուլուբաբյան Բ., Դրվագներ... էջ 108-109, 127, Акопян А., Албания-Алуанк..., էջ 113, Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 205:

մարգագանությունը: Առաջինը տեղի է ունեցել 461 կամ 462 թ. և հաջորդել է Աղվանքի թագավոր Վաչեի անհաջող ապստամբությանը: Երկրորդ իրադարձության վերաբերյալ տեղեկություններն այնքան էլ հստակ չեն, ուստի ուսումնասիրողները տարբեր տեսակետներ են հայտնել այդ մասին: Մեծ տարածում ունի, մասնավորապես այն տեսակետը, թե Արցախը և Ուտիքը Աղվանից մարգագանությանն են միացվել առանձին առանձին և տարբեր ժամանակներում, այսինքն՝ Ուտիքը՝ 428 թ., իսկ Արցախը՝ 451 թ.¹: Այս տեսակետը հիմնված է Եղիշեի մի հաղորդման վրա, որտեղ Ուտիքում գտնվող Խաղխաղ քաղաքը Աղվանից թագավորների ձմեռանոց է անվանվում²: Սկզբնաղբյուրների տեղեկությունների համեմատական վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ դա չի կարող համարվել վարչական սահմանների փոփոխությունը հավաստող փաստ: Ավելի հավանական ենք համարում, որ այդ երկու աշխարհներն էլ Աղվանից մարգագանությանն են միացվել 451 թ.³ Վարդան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը ճնշելուց հետո: Այս իրադարձությունների արդյունքում վերջնական տեսք ստացավ Աղվանից մարգագանությունը, որի պաշտոնական անվանումն էր այդ երկրի իրանական անունը՝ Առանը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայոց Արևելից կողմերը Աղվանից մարգագանության կազմում», քննության են առնված մարգագանության կազմում հայկական տարածքների գտնվելու ժամանակաշրջանին առնչվող կարևորագույն հարցերը, մասնավորապես՝ «Աղվանք» անվան նշանակության և նրա կրած իմաստային փոփոխությունների խնդիրը, Վաչագան Բարեպաշտի «Թագավորության» և նրա իրական պաշտոնի խնդիրը, ինչպես նաև ներկայացված է մարգագանության ձևավորման գործընթացի ավարտից հետո ստեղծված վարչաքաղաքական նոր իրադրությունը:

Ի մի բերելով Աղվանք-Ալբանիա և Առան անվանումների մասին ուսումնասիրողների առաջ քաշած տեսակետները՝ ցույց է տրվել, որ հունահռոմեական *Ալբանիա* անվանումը հայկական *Աղուանքի* հնչյունափոխված տարբերակն է: Այն նշանակում է «արգավանդ կամ բարեբեր դաշտ» կամ «բարեբեր դաշտի երկիր», ինչը կապված է այդ տարածքի բնական պայմանների հետ: Մոտավորապես նույն իմաստն ունի նաև իրանական *Առան* բառը, որը մինչ այժմ էլ կիրառվում է հայերենի արևելյան բարբառներում և կովկասյան որոշ լեզուներում *դաշտ* իմաստով: Արցախի և Ուտիքի՝ Աղվանից մարգագանությանը միացվելուց հետո Աղվանք և Առան անվանումները, ունենալով զուտ աշխարհագրական իմաստ, տարածվում են նաև նրանց զբաղեցրած ամբողջ տարածքի վրա:

¹ Акопян А., Албания-Алуанк..., էջ 113-114, Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը և Արշակունեաց թագաւորութեան խնդիրը..., էջ 122, Հարությունյան Բ., Մեծ Հայքի հյուսիսարևելյան..., էջ 92:

² Եղիշե, էջ 75:

Հայոց Արևելից կողմերը առանցքային դերակատարություն են ունեցել Աղվանից մարզպանության քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքում: VI դարում Կուրի ձախ ափից՝ Չոդից, Հայոց Արևելից կողմեր՝ Պարտավ են տեղափոխվել Աղվանից մարզպանության կենտրոնը և Աղվանքի կաթողիկոսարանը: Աղվանից մարզպանության մեջ հայկական տարրի ուժեղացման գործում կարևոր նշանակություն է ունեցել Վաչագան Բարեպաշտի գործունեությունը, որը ծավալվել է V դ. վերջում: Վաչագանի ծագման և զբաղեցրած դիրքի ու պաշտոնի մասին ուսումնասիրողները հակասական տեսակետներ են հայտնել, բայց սկզբնաղբյուրների տեղեկությունների քննական վերլուծությունը մեզ բերել է այն համոզման, որ նա եղել է Արցախի իշխաններից մեկը, ում Սասանյանները, իրենց սովորության համաձայն, թագավորի տիտղոս են տվել սիրաշահելու նպատակով, սակայն որոշ ձեռագրերում պահպանվել է նրա նամակագրությունը Սյունիքի եպիսկոպոս Պետրոս Սյունեցու հետ, որտեղ վերջինս Վաչագանին դիմում է «Աղուանից իշխան» տիտղոսով¹: Այս փաստից մենք եզրակացրել ենք, որ նրա պաշտոնը համապատասխանում էր հայկական աղբյուրներից հայտնի «տանուտեր Հայոց» կամ «իշխան Հայոց» կոչվող պաշտոնին, որը ստեղծվել էր Սասանյանների օրոք, բայց պահպանվեց նաև արաբական տիրապետության շրջանում: Նրա լիազորությունների մեջ պետք է մտնեին մարզպանության ներքին խնդիրների կարգավորումը՝ մեծամասամբ հասարակական, տնտեսական և կրոնական բնույթի: Այս ենթադրությունը հաստատվում է ինչպես Վաչագանի գործունեության նկարագրությամբ, այնպես էլ Սասանյան Պարսկաստանի վարչական համակարգի մասին առկա տեղեկություններով: Այնուամենայնիվ, այս հարցի վերաբերյալ հստակ և վերջնական ձևակերպումներ տալը ներկայումս անհնար է, և, կարծում ենք, այն ավելի խորը ուսումնասիրության կարիք ունի:

Հայկական տարածքների՝ Աղվանից մարզպանությանը միացվելու հետևանքով ի հայտ է գալիս «Հայոց Արևելից կողմեր» հասկացությունը, որը ևս գուտ աշխարհագրական բնույթ ուներ: Վարչական տեսակետից մարզպանությունները բաժանվում էին գավառների, իսկ Մեծ Հայքի վարչական միավորներ հանդիսացող աշխարհներն, ամենայն հավանականությամբ, լուծարվել են: Իհարկե, այդ աշխարհների զգալի մասը հիշատակվում է նաև ավելի ուշ ժամանակներում, բայց այս դեպքերում մենք գործ ունենք կա՛մ աշխարհագրական անունների, կա՛մ նույն անունը կրող այլ տիպի միավորների հետ:

Երրորդ գլուխը՝ «ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ՝ ԱՐՑԱԽԻ ԵՎ ՈՒՏԻՔԻ ԳԱՎԱՌԱԲԱՄԺԱՆՈՒՄԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Արցախի գավառները», ներկայացված է աշխարհագրության Արցախ աշխարհի գավառաբաժանման համակարգը: Հայոց Արևելից կողմերի գավառաբաժանումն «Աշխարհացոյց»-ում ներկայացված է

¹ Մատենադարան, ձեռ. № 2679, էջ 195 ա, № 3074, էջ 110 բ, № 4381, էջ 17 ա, № 6228, էջ 141 ա, տե՛ս նաև Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Ե., 1948, էջ 242:

երկու անգամ կամ երկու ձևով, մեկը՝ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների առանձին-առանձին նկարագրությամբ, մյուսը՝ Աղվանքի նկարագրության մեջ նրան միացված հայկական գավառների թվարկմամբ: Պետք է նշել, սակայն, որ Աղվանքի հատվածը զգալի աղավաղումների է ենթարկվել արտագրողների կողմից, ուստի գավառների ցանկն «Աշխարհացոյց»-ի ոչ բոլոր օրինակներում է պահպանվել, իսկ եղածն էլ քիչ է օգնում գավառների տեղադրության հարցում: Քանի որ վաղ միջնադարի սկզբնադրույնները շատ քիչ տեղեկություններ են պահպանել Արցախի և Ուտիքի գավառների մասին, իսկ ավելի ուշ ժամանակների աղբյուրներն ավելի հաճախ իրենց օրոք եղած վիճակն են ներկայացնում, ներկայումս այնքան էլ հեշտ չէ պարզել այդ գավառների տեղադրությունն ու սահմանները: Այս հարցում վճռական նշանակություն ունի «Աշխարհացոյց»-ում գավառների թվարկման սկզբունքներն ու օրինաչափությունները բացահայտելը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում ոչ միայն տեղորոշել առանձին վերցրած գավառները, այլև վերականգնել գավառաբաժանման ընդհանուր պատկերը: Արցախի գավառների մասին «Աշխարհացոյց»-ի և մյուս աղբյուրների հաղորդած տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը թվարկված է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ, բայց այս սկզբունքից շեղվում են Մյուս Հաբանդը, որը մի ժամանակ Մյունիքի Հաբանդ գավառին միացած է եղել ու գտնվում էր վերջինիս հարևանությամբ, ինչպես նաև Քուստ ի Փառնես և Կողթ գավառները, որոնք նախապես Ուտիքի մաս են կազմել և բնաշխարհագրական տեսակետից առանձնանում են Արցախի մյուս գավառներից՝ գտնվելով Մոավի լեռնաշղթայից հյուսիս: Արցախի մյուս ինը գավառները տեղադրվում են հետևյալ կերպ. Վակունիքը՝ Տրտու (Թարթառ) գետի վերին հոսանքում, Բերձորը՝ Տրտուի Թութխու վտակի ավազանում, Մեծկունքը՝ Տրտուի միջին հոսանքի շրջանում, Մեծիրանքը կամ Մեծ Առանքը՝ Խաչենագետի ավազանի վերին հատվածում, Հարձանք գավառը՝ Կարկառ գետի ավազանում, Մուխանքը՝ դրանից հարավ և հարավ-արևելք, Պիանք գավառը՝ Մուխանքից հարավ՝ հավանաբար Քյոնդալանչայ կոչվող գետի վերին հոսանքում, Պածկանքը պետք է տեղադրել Մուխանքից ու Պիանքից հարավ՝ մինչև Արաքս, իսկ Սիսական Ոստան կամ Սիսական ի Կոտակ գավառը գտնվում էր Արցախի ծայր հարավում՝ Արաքսի ափին՝ Հակարի գետից արևելք:

Երկրորդ ենթագլուխը՝ «Ուտիքի գավառները», նվիրված է Ուտիք աշխարհի գավառաբաժանման նկարագրությանը: «Աշխարհացոյց»-ում նշվում է, որ Ուտիքն ունի յոթ գավառ, մինչդեռ թվարկվում է ութը՝ «Արանոտ, Տոխ, Ռոտպացեան, Աղուէ, Տուչքատակ, Գարդման, Շիկաշէն, Ուտի առանձնակ»¹: Ուսումնասիրողները համակարծիք են այն հարցում, որ սրա պատճառն «Աշխարհացոյց»-ի գրվելուց հետո ստեղծված Ուտի Առանձնակ գավառի անվան ավելացումն է: Այս գավառի ստեղծումը կապված էր Աղվանից մարզպանության կենտրոնը Պարտավ տեղափոխելու հետ, ուստի այն տեղադրվում է Պարտավ

¹ «Արբոյ հօրն մերայ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք», էջ 610:

քաղաքի շրջակայքում՝ Ուտիքի կենտրոնում: Մյուս գավառների թվարկման հաջորդականությունը հուշում է, որ այստեղ պահպանվել է այն ժամանակների ազդեցությունը, երբ Ուտիքի տեղում երկու առանձին աշխարհ կար: Առաջին երեք գավառները՝ Առան-ռոտ, Տրի և Ռոտ-Պացեան, զբաղեցնում էին նախկին Օտենե-Ուտիքի տարածքը, այսինքն՝ Կուր գետի ափով ձգվում էին հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք սկսած Առան-ռոտից, որը գտնվում էր Ուտի Առանձնակի հարևանությամբ, մինչև Ռոտ-Պացեան, որը տեղադրվում է Արաքսի և Կուրի միախառնման շրջանում, իսկ Տրի գավառը գտնվում էր նրանց միջև: Հաջորդ չորս գավառները՝ Աղուե, Տուչքատակ, Գարդման, Շակաշեն, զբաղեցնում էին նախկին Սակասենե-Գարդմանի տարածքը և նույնպես ձգվում էին հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ՝ սկսած Աղուեից, որը գտնվում էր Աղստև գետի ավազանում և սահմանակցում էր Գուգարք և Այրարատ աշխարհներին: Նրանից հարավ-արևելք գտնվում էր Տուչքատակ գավառը, որը զբաղեցնում էր Տավուշ գետի ավազանը: Գարդման գավառն ընգրկում էր Զակամ և Շամքոր գետերի ավազանները՝ բացառությամբ Շամքորի վերին հոսանքի, որտեղ գտնվում էր Արցախի Քուստ ի Փառնես գավառը: Շակաշենը, ինչպես պարզ է դառնում նախորդ գավառների տեղադրությունից, պետք է զբաղեցներ Գարդմանի և Ուտի Առանձնակի միջև ընկած տարածությունը, այսինքն՝ ժամանակակից Գանձակ և Կուրակ գետերի միջին և ստորին հոսանքները:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները.

1. Արցախը և Ուտիքը հնագույն հայկական երկրամասեր են, որոնք սկզբից նեթ գտնվել են հայկական պետության կազմում և բաժանել են նրա մյուս հատվածների ճակատագիրը.

2. Արցախ և Ուտիք աշխարհների կազմավորումն ընթացել է Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի ստեղծման ու զարգացման գործընթացի շրջանակներում՝ ենթարկվելով նույն օրինաչափություններին և սկզբունքներին.

3. Արցախը ստեղծվել է մյուս աշխարհների հետ միաժամանակ, իսկ Ուտիքի տեղում սկզբնապես երկու աշխարհ է եղել՝ Օտենե-Ուտիք և Սակասենե-Գարդման, որոնք միավորվել են հավանաբար III դ..

4. Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո նրա տարածքը ենթարկվել է վարչական նոր բաժանման Սասանյան Պարսկաստանի կողմից, ինչի հետևանքով հայկական որոշ երկրամասեր, այդ թվում՝ Արցախը և Ուտիքը, հարևան երկրների հետ միասին կազմել են վարչական նոր միավորներ՝ մարզպանություններ.

5. Աղվանից մարզպանությունը, որի մաս կազմեցին Արցախը և Ուտիքը, ամենայն հավանակությամբ ստեղծվել է 387 թ., երբ Սասանյանները նվաճեցին տարածաշրջանի երկրները, բայց որոշ ժամանակ դեռ պահպանվում էին տեղական արքայական հարստությունները, մասնավորապես Աղվանքի թագավորությունը վերացվեց 461 կամ 462 թ.,

6. Արցախը և Ուտիքը Աղվանից մարզպանությանն են միացվել 451-481 թթ. ընկած ժամանակահատվածում, ամենայն հավանականությամբ՝ 450-451 թթ. ապստամբությունը ճնշելուց հետո,

7. Մարզպանությունների ստեղծումից հետո Մեծ Հայքի՝ ըստ աշխարհների վարչական բաժանումը դադարում է գոյություն ունենալ, քանզի մարզպանությունները բաղկացած էին միայն գավառներից, իսկ նախկին աշխարհների անվանումները վերածվում են զուտ աշխարհագրական հասկացությունների,

8. Աղվանից մարզպանությունը զուտ վարչական երևույթ էր, ուստի Արցախը և Ուտիքը չեն կորցրել կապը հայկական մյուս տարածքների հետ և կարողացել են պահպանել իրենց ազգային դիմագիծը:

ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ տրված է Հայոց Արևելից կողմերի երկու քարտեզ, որոնցից մեկը կազմված է հեղինակի կողմից:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Административно-территориальное формирование марзпанства Аран и включение Персидским двором в его состав армянских областей Арцах и Утик, Պատմա-բանասիրական հանդես, 2012, թիվ 2, էջ 210-227:
2. Հայոց Արևելից կողմերի աշխարհաբաժանումն ըստ հայ և օտար հեղինակների, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Գ, Երևան, 2012, էջ 153-161:
3. Արցախի գավառաբաժանումը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Գ, Երևան, 2012, էջ 162-174:

ГЕВОРГЯН ТИГРАН КАМОЕВИЧ
ВОСТОЧНЫЙ КРАЙ АРМЕНИИ ПО «АШХАРАЦУЙЦ»-У

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 4-го июня 2013 г., в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4)

РЕЗЮМЕ

Настоящее исследование посвящено изучению истории и исторической географии Восточного края Армении (области, состоящей из двух «ашхаров» Великой Армении, Арцах и Утик) на основе данных «Ашхарацуйц»-а, которые дополняются сведениями из других источников. Вопрос рассматривается в контексте общей развития системы административного деления царства Великой Армении.

Диссертация состоит из введения, трех глав, эпилога, списка использованных источников и литературы, а также из приложения с двумя картами. Во введении обоснованы важность и актуальность исследования, научная новизна работы, указаны цели и задачи, поставленные перед автором, проанализированы использованные источники и литература.

В первой главе работы, «Процесс административного формирования «ашхаров» Великой Армении и формирование и развитие «ашхаров» Восточного края Армении Арцаха и Утика», кратко обрисована история образования системы административного деления Великой Армении и указывается, что крупные административные единицы, «ашхары», уже существовали в начале II в. и, скорее всего, были созданы во второй половине I в. Трдатом I-ым. Не смотря на то, что Арцах и отдельные части Утика упоминаются в более древних источниках, это нельзя считать упоминанием «ашхаров», поскольку там речь идет не об административных единицах, а о физико-географических областях. Поскольку при проведении административных реформ учитывались природные условия страны, то границы таких областей очень часто совпадают с границами административных единиц, «ашхаров» и «гаваров» (уездов). Если Арцах был создан одновременно с остальными «ашхарами», то Утик в том виде, в котором мы видим в «Ашхарацуйц»-е, появляется намного позже, наверняка в III в., а до этого на его территории существовали два «ашхара», названные в греческих источниках *Сакасена* и *Отена*, а в армянских, соответственно, *Гардман* и *Утик*. По всей вероятности, имели место так же изменения административных границ между «ашхарами», однако в источниках нет прямых указаний на такие изменения. По этому предположения, высказанные о них учеными, остаются на уровне версий.

Во второй главе, названной «Формирование географического понятия Восточный край Армении», изучаются процессы, начавшиеся с раздела Великой Армении между Сасанидской Персией и Римской империей, в результате чего во власти Персии оказались кроме большей части Армении, еще и сопредельные страны Иверия и Албания. На основе всестороннего анализа всех имеющихся фактов показывается, что сразу после завоевания Сасаниды ввели должность наместника, «*марзпана*», который изначально был командиром дислоцированных в этих странах персидских войск и имел в основном военные функции, но со временем царская власть местных монархов упразднилась, и марзпаны получали все больше и больше полномочий, сосредоточивая в своих руках как военную, так и гражданскую власть. Указывается, что важной составляющей административной политики Сасанидов были изменения границ между марзпанствами, одним из проявлений которых было включение в состав марзпанства Аран или Албания армянских областей Арцах и Утик. Произошло это событие в 451-481 гг., по всей вероятности после подавления персами восстания 450-451 гг.. Таким образом появляется понятие Восточный край Армении, под которым понимается та часть Армении, которая оказалась в пределах Албанского марзпанства.

В этой главе так же обсуждаются вопросы появления и применения названия Албания-Алуанк. Описывается положение Восточного края Армении в составе Албанского марзпанства, показывается, что армянские князья имели большое влияние в нем и участвовали в его управлении. Выясняется, что после создания марзпанств «ашхары» Великой Армении были упразднены, а их уезды, «гавары», просто включались в список уездов того или иного марзпанства.

В третьей главе, «Деление на «гавары» армянских восточных «ашхаров» Арцах и Утик», описываются уезды Арцаха и Утика. Путем сравнения разных источников, а также сохранившихся рукописей «Ашхарацуйц»-а, восстановлены названия всех «гаваров», уточнены спорные и поврежденные места в тексте «Ашхарацуйц»-а. Особое место уделено вопросу локализации «гаваров». Главной целью автора диссертации названо восстановление той картины административного деления, которое существовало в эпоху владычества Сасанидов, по этому данные более поздних источников использованы лишь частично. Приведены точки зрения всех ученых, которые занимались этим вопросом. Выявлены те принципы и закономерности, по которым описаны «гавары» Арцаха и Утика в «Ашхарацуйц»-е. Указывается, что ключом к правильной локализации этих «гаваров» является поочередность их перечисления в «Ашхарацуйц»-е. Именно на этой основе дана новая локализация «гаваров» Арцаха и Утика.

В эпилоге подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

GEVORGYAN TIGRAN KAMO

THE EASTERN REGION OF ARMENIA BY “ASHKHARHACUYC”

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on June 4, 2013, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

The present study investigates the history and historical geography of The Eastern region of Armenia (area consisting of two *“ashkharh”*s of Greater Armenia, *Artsakh* and *Utik*) based on data of *“Ashkharhacuyc”*, which are supplemented by information from the other sources. Question considered in the context of the overall development of the administrative division of the kingdom of Great Armenia.

The thesis consists of an introduction, three chapters, epilog, the list of sources and references and the appendix with two maps. The scientific novelty, importance and relevance of research argued in the introduction. Then intentions and assigned tasks of the study are presented, and the sources and literature analyzed.

In the first chapter, “The process of formation of provinces (“ashkhar”)s of Greater Armenia and the formation and development of provinces Artsakh and Utik of The Eastern region of Armenia”, briefly presented the history of education of the administrative division of Greater Armenia, and indicate that large administrative units, “ashkharh”s already existed at the beginning of the II century and, most likely, have been created in the second half of the I century by Trdat the First. Despite the fact that Artsakh and the some parts of Utik mentioned in the more ancient sources, this is not a reference to “ashkharh”s, since there it is not administrative units, but the physical and geographical areas. The boundaries of many regions often coincide with the boundaries of administrative units, “ashkharh”s and “gavar”s (districts), because natural conditions. Artsakh was established simultaneously with the rest of the “ashkharh”s, but Utik in the form in which we see in “Ashkharacuyc”, appears much later, for sure in the III century, and before that there were two “ashkharh”s on its territory, named Otena and Sacasena in Greek sources, Utik and Gardman in Armenian sources. In all likelihood, there were also changes in the administrative boundaries between “Ashkharh”, but there are not direct evidence of such changes in sources.

The second chapter, titled “Formation Eastern region of Armenia as a geographical concept”, examines the processes that began with the division of Greater Armenia between Sassanid Persia and the Roman Empire. As a result, a large part of

Armenia, and even the neighboring countries of Albania and Iberia came under the dominion of Persia. Comprehensive analysis of all the available evidence shows that, immediately after the conquest Sassanids established the post of governor, “*marzpan*”, which was originally a commander of Persian troops stationed in the conquered countries. Over time were eliminated the local royal dynasties and all of military and civil authorities were concentrated in the hands of “*marzpan*”s. Indicates that an important part of the administrative policy of Sassanids were the changing boundaries between provinces, one manifestation of which was the inclusion of Armenian provinces of Artsakh and Utik in the Albanian “*marzpanutyun*”. This event took place in the years 451-481, most likely, after the suppression of 450-451 years.

In this chapter also discusses the emergence and use of the name Albania-Aluank, describes the situation of the Eastern region of Armenia in the Albanian “*marzpanutyun*”, shows, that the Armenian dukes had great influence in it and participated in its management. It turns out that after the formations of “*marzpanutyun*”s, “*ashkharh*”s of Greater Armenia were abolished and their “*gavar*”s simply included in the list of districts of “*marzpanutyun*”s.

In the third chapter, “The division to “*gavar*”s of Armenian Eastern “*ashkharh*”s Artsakh and Utik”, describes districts of Artsakh and Utik. Comparing a variety of sources, as well as the surviving manuscripts of “*Ashkharhacuyc*”, we can restore the names of all “*gavar*”s and clarified controversial and damaged areas in the text of “*Ashkharhacuyc*”. Particular attention is paid to the issue of localization “*gavar*”s. The main purpose of the author of the thesis are to rebuild a picture of administrative division, which existed in the era of Sassanid rule, according to this data of later sources used only partially. In this chapter also given in terms of all the scientists who were involved in this matter, are defined those principles and regularities, which describes “*gavar*”s of Artsakh and Utik in “*Ashkharhacuyc*”. It was indicated that the key to the correct location of these “*gavar*”s in serialization, that we see in the “*Ashkharatsuyts*”. It is on this basis, gives the new localization of “*gavar*”s of Artsakh and Utik.

The main findings and results of the study are summarized in the conclusion.